

ԳԼՈՒԽ I. ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԱԶՈՒԹՅՈՒՆԸ

ՏՐԱՊԵՉՈՆԻ ՆԱՀԱՆԳ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Տրապիզոնի հունական կայսրության (պատմական Պոնտոսի) վերջնական անկումից (1461 թ.) առաջ և հետո Սև ծովի այդ երկրամասի Հումշեն, Սյուրմենե (Սև-գետ) և հարակից Յոմուրայի շրջաններում ու, առհասարակ, Բաթումից մինչև Սինոպ ընկած ամբողջ տարածքում և Գյումուշխանե գավառում սափարախիա հաավածներով բնակվում էին համշենահայերը, որոնք տեղի պատմական անունով կոչվում էին նաև պոնապայեր։

XVII—XVIII դդ. սկսած, համշենահայերին բռնությամբ իսլամացնելու նպատակով թուրքական ըռնապետության ու մոլեռանգ կրոնավորների զործագրած զազանությունների հետևանքով, համշենահայերի զգալի մասը, ֆիզիկական ընաշնշման ահից, յաթազանի սպառնալիքի աակ, ռնզունեցա մահմեդական կրոնն ու կառչած մնաց արգեն հայրենի գարձած օշախներին։ Նրանք, որ հասաաա մնացին իրենց ազգային գարավոր մշակույթին ու կրոնական հավաաքին, լքեցին իրենց պապենական բնակավայրերն ու սփռվեցին այս լեռնաշխարհում՝ երկրամասեր, որոնք գարձան նրանց նոր հայրենիքը։

Մինչև XX դ. սկզբները Տրապիզոնի նահանգը (վիլայեթ), որաեղ հիմնականում սփռված էր համշենահայությունը, ընզըրկում էր Սև ծովի հարավային ափերը՝ Բաթումից մինչև Սինոպ, հյուսիսային լայնության 40—42 և արևմտյան երկարության 36—42 ասաիճանների միջև։ Նահանգի վարչական կենարոնը՝ կուսակալանիսա քաղաքը, Տրապիզոնն էր։ Նահանգը ռաժանված էր չորս գավառի (սանշակ)՝ Տրապիզոնի, Լազիսաանի (կենարոնը՝ Ռիզե), Սամսոնի (Ճանիկ) և Գյումուշխանեի։ Գավառներն իրենց հերթին բաժանված էին գավառակների (կազա)։ Տրապիզոնի գավառում՝ Օրգու, Կիրասոն, Կյուրելե, Վազիֆր-Քեպիր, Պլաաանա (Ազլեապատ)։ Լազիսաանում՝ Համշեն, իոփա, Սթինա, Սամսոնի գավառում՝ Բաֆրա, Ջարշամպա, Թերմե, Ունիե, Կավախ,

Գյումուշխանեի գավառում՝ Թորուզ (Արասսա), Քելթիթ, Շեյրան։ Գավառակներն իրենց հերթին ռաժանված էին գյուղախմբերի կամ վիճակների (նահիե), վերջիններս էլ՝ առանձին գյուղերի կամ բնակավայրերի։

Գավառի իշխանությունը գանվում էր նահանգապետի (վալի) կողմից նշանակված գավառապետի (մյուլթեսարիֆ) ձեռքին, որը ենթարկվում էր վալիին։ Գավառակի կառավարիչը՝ գայմազամը նույնպես նշանակվում էր նահանգապետի կողմից և անմիջականորեն ենթարկվում էր մյուլթեսարիֆին։ Նահիեի կառավարիչը կոչվում էր միզուր (ալվազ), որին նշանակում էր գայմազամը (ուստի գյուղախումբ-նահիեն կոչվում էր նաև միզուրլու)։ Գյուղերն ունեին իրենց ռընտրովի՝ գյուղապետը կամ տանուտերը (թաղապետ կամ մուլթար), որը պարաավոր էր հետևել ու աջակցել պետական որոշումների կամ հրամանների իրականացմանը։

Արևելքից արևմուտք, Ճորոխի գետաբերանից մինչև Սինոպի սահմանը՝ Գրզըլ-իրմաքի (Ալիս) գետաբերանը, խճուղով 674 մզոն (1145 կմ) էր։ Հարավից հյուսիս նահանգի լայնությունը հասնում էր 50—80 կմ, առանց Գյումուշխանե գավառի, ուր այն հասնում էր շուրջ 125 կմ։ Նահանգի մակերեսը 32400 քառ. կմ էր, որից մշակովի հոզեր էին ընգամենը 17%-ը՝ 5400 քառ. կմ, չօգտագործվող, բայց մշակության պիաանի՝ 17%-ը՝ 5400 քառ. կմ, անտառներով ծածկված տարածությունը՝ շուրջ 20%-ը՝ 6500 քառ. կմ, լեռնային արոաավայրերը՝ 25%՝ 8000 քառ. կմ,

¹ Տրապիզոնի նախկին նահանգը ներկայումս ռաժանված է վեց առանձին վիլայեթների, որոնք են՝ Տրապիզոն, Ռիզե (նախկին Լալիստան), Օրգու, Կիրասոն (որին միացվել է նաև Եապին-Գարահիսարը), Սամսոն և Գյումուշխանե։ (Տե՛ս ժժամանակակից Թուրքիան, Նրևան, 1967, էջ 414 և ներդիր քարաեզր։ Հ. Խանջյան, Աշխարհագրություն Օսմանյան կայսրության, Կ. Պոլիս, 1912)։

անպատճանկրն ու օդադորժման համար անպետք հոգեբր՝ շուրջ 21%- 7000 քառ. կմ²: Նահանգն արևելքից սահմանակից էր Անդրկովկասին, հարավից՝ Կարինի ու Սեբաստիայի նահանգներին, արևմուտքից՝ Գաստեմունիի (Ասասիա) նահանգին, հյուսիսից Սև ծովն էր։

Ամրոդշ նահանգը գրեթե համատարած լեռնաշխարհ է, բացի Կշիլ-Իրմաք (նախկինում՝ Իրիս) և Գրզըլ-Իրմաք (նախկինում՝ Ալիս) դեռևի ծովամերձ հովիտներից ու ծովեզերքի առանձին հատվածներում նեղ շերտով՝ մեծ մասամբ ճահճային հարթավայրերից։ Պոնտական կտմ Պարխարյան գոգավոր լեռնաշղթան ձգվում է ողջ նահանգի հարավային երկայնքով։ Տրապիզոնից հարավ-արևելք, Ռիզևից ուղիղ դժով շուրջ 80 կմ հեռավորության վրա, բարձրոնում է լեռնաշղթայի ամենտրարձր դագաթը՝ Քաջքարը կամ Կարշամը (3937 մ), որը հասնում է մշտնջենական ձյան ստմանին։ Տրապիզոնից շուրջ 50 կմ հարավ, Գյումուշխտնեի մոտ, Ձիզանա սարի գագաթը ավելի քան 2000 մ. բարձրություն ունի։ Ձիդտնայից արևմուտք լեռների բարձրությունը աստիճանաբար իջնում է։ Ամսոնի դավառում լեռների միջին բարձրությունը հավասար է 1000—1200 մ.։ Շատ վայրերում, հատկապես նահանգի արևելքում, լեռների թևերն ու բազուկները ինչևե՛ն ուղղակի ծովափ, գոյացնելով բազմաթիվ կիրճեր, խորխորատներ, հրվտնդաններ ու ծոցեր։ Նահանգի գլխավոր լեռներից հիշատակության արժանի են Տրապիզոնի մոտերքում Ալուրմենեի, Կալաֆկայի, Արդուլայի, Գարատաղի, Կրոմի, Սանթայի, Կալիանի լեռները, Աինջանի ու Այորի ապառաժները, Օրդու դավառում՝ Քիրեզ-տերե, Բաշ-չարտազ, Գարա-դյուլի լեռները, Ունիայում՝ Քյոքուդ, Կապաք-կելիշ, Սիվրի-դադ, Չամ-րելի, Ուզու-տազ լեռները, Չարշամալյում՝ Թովկար-րաջի, Չանկելիշ, Տաշլի-յաթազ, Աալ-քիրեզ, Արփա-չուդուր, Թոփալլի և այլ լեռներ։

Նահանգի կլիման բազմազան է։ Մովափնյա հարթավայրերում ու հովիտներում տարևրային պատուհաս էր ջերմը, որին անզացիք դռղ (սըրք-մա) էին ասում։ Ամսովա ամիսներին ջերմից առաապում էին մեծն ու փոքրը։ Մովևզերքից իշնելով դեպի հարավ, մերձարևադարձային կլիման աստիճանաբար փոխարինվում է բարեխառնի։ Բարձր լեւներում ու սարահարթներում աիրում է ցամաքային կլիման, ամռանը՝ շոգ, ձմռանը՝ ծածկրված ձյան հաստ շերտով։ Առանձնապես առողջարար, կենսատու օդով ու զուլալ ջրերով հադեցած են միջին և բարձր լեռնային տարածությունները։

^[2] Հրանտ Խաճջյան, Աշխարհագրություն Օսմանյան կայսրության, էջ 24։

Մովափնյա հատվածներում ձմեռվա ամիսների միջին ջերմասաիճանը —3° —5° պակաս չի լինում, հազվադեպ երևույթ է —5° —7° սառնամանիքը։ 1500—2000 մ. բարձրության լեռներում ու սարահարթերում ձմեռվա ամիսներին այնքան ձյուն էր կուտակվում, որ ճանապարհները փակվում և երթևեկությունը օրերով դադարում էր։

Պոնտական լեռնաշղթայի ծովահայաց լանջերում անժայրածիր անտառները Սև ծովից բարձրացող խոնավության կուտակման ու հորդառաա տեղումների վիթխարի շտեմարան են։ Ամենաառատ տեղումները լինում են նահանգի արևելքում՝ Համշենում ու Լազիստանում։

Գերակշռող բարեխառն կլիմայի ու հորդ տեղումների շնորհիվ, լափազանց ճոխ ու բազմազան է նահանգի բուսականությունը։ Մովափնյա մերմ ու արեդունի, հատկապես քամիներից պաշապանված վայրերում՝ Ռիզեից մինչև Բաթումի սահմանները նարնջի ու կիտրոնի համաաարած այգիներ էին։ Տրապիզոնի շրջակայքում, առանձնապես Պլատանայում, ձիթապաղի (զելթուն) առատ բերք է սաացվում։ Կաղնու՝ լայնատարած ալգիներ կան նահանգի միջին ու արևելյան, մանավանդ Կիրասոնի ու Տրապիզոնի շրջաններում։ Մովից մինչև 1000 մ. բարձրության ընդարձակ լեռնային տարածությունները ծածկված են թանկարժեք սաղարթավոր ու մշտադալար ծառատեսակների անտառներով՝ աժրի (հաճարենի), խոզկադնու, մաշմուրգենու (շադանակ), լասանեու, մոնի, կաթնաաերևի, մշտադալար առսախի, ծվադենու և այլ ծառերով։ Շաա վայրերում բարձր

^[3] Կադիե—ընտանի կաղնի ծառի պտուղը, որը պիտանի է մարդկանց սննդի համար, պնդուկ։ ...Կադին արթայական—նույնն է Արթայակադին։ (Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. III, Ե., 1974)։

Պոնտահայերի, այդ թվում նաև համշենահայերի մեծ վաղուց անաի քաղաքացիության իրավունք էո ստացել մշակովի այս պտղի՝ թփտկազնու, ակոդինի կամ պնդուկի կադին անվանումը, իսկ սրա մշակովի ալգին կոչվում էր կադեուա։

Այս կապուկցությամբ հետաքրքիր է Ղ. Ալիշանի հետեյալ գիտադոթյունը. «Արթայակադին. Արթակադնի։ Մանոթ ծառ մանավանդ Պտղովն, որ է կադին։ Պօնաօք (արարենեն)... Ֆրեսուդգ. նույնպես ծանոթ է Պոնտոսի կողմերն այս ծառիս հատուկ կամ հայրենիք ըլլալն. անոր համար ի հնուց Յոյնք Պոնաաական ընգոյզ կոչւր են... Իսկ մեր մեծ առաւելախոսն (Մխ. Գոշ) դԱրթակադնին՝ վայրի կադինի ծառի հետ համեմատելով, այս ետքինս ներկայացնն հպարտ ի մեծութեան համար. «Իսկ Արթայակազնի ոչ ծուժկալ՝ հանդիմանական վարեցալ առ նա բանիւվ... զի՞» այդպես հանդիւնիս. Ես ե ոչ մի ինչ եմ, բայց մարդիկ զպաուզ իմ ուտելով՝ ե դիս ես հարդեն. այլ պտուղ քո ի զարման կալ խողիցս։ (Տե՛ս Ղ. Ալիշան, Հայրուսակ կամ հայկական բուսարաոություն, Վենետիկ, 1895, էջ 65—66)։ (Մանոթությունը խմբադրի)։

ծառերի շվաքներում աճում են խիտ ճենթաանտառներ՝ կազմված կաղնու, լաշիի, ըղբիի (խաշի ծաղիկ), հոնի ծառերից և մասուրի ու բաղմաղան մագլցող որթատունկերից ու փշերից։ Վերջինները երբեմն տյնքան խիտ ու խճողված են լինում, որ առանց հտտող գործիքի (դանակ-ապար) առաջանալը համարյա անհնար է։ Այս գոտու անտառները չափազանց հարուստ են նաեվ այրի պտուղներով՝ տտնձ, ընկուլղ, խնձոր, սալոր, կեռաս, ռալ, թուզ և այլն։ 1000—2000 մ բարձրություններում տիրողը սնկատրույր, երկնաքեք մայրու, սոճու և եղևնու պուրակներն են։ Սնտառային գոտուց վերե սկսում են լայնատարած արոսավայրերը, հյութուլի խոտածածկույթով, տվտն ու ռուրումնտվետ ծողիկներով, ուր ամառվա տմիսներին բորձրանում են խաշնարածներն ու նախրապանները։ Հարյուրավոր ընտանիքներ, ամառվա շոգերին, այս կենսարար վայրերն են փոխադրվում։

Անտառներում, մանավանդ հեռավոր վայրերում, շատ էր հանդիպում քարայծ, եզջերու։ Գիշատիչներից տարածված էին գայլը, արջը, վարաղը, շնագայլը, աղվեսը։ Թռչուններից հիշենք սարյակը, ուրուրը, արտույտը, փայափորիկը, կաշաղակը, լորամազը, ըաղեն, ճայը, ագռավը, բուն, տատրվը, ծիծեռնակը։ Հեռավոր բարձունքներում ճախրում է արծիվը։ Թռնավոր ու անթույն օձեր շատ են տարածված առանձնապես քարքարոտ վայրերում։

Լեռնային գետերում բաղմանում էր կամրախայտ ձուկը, որն իր համեղ մսով գրեթե մրցակից է Սեանի աշխարհահռչակ Իշխան ձկան։ Սե ծովից որսած ձկներից հանրահայտ էին վահանածուկը, օձածուկը, երկայնածուկը (կեֆալ, գլխան), սկումրդիան, մեղկիթը, թերսին, գլփինը։ Տարածված է առտնձնապես Տրապիդոնի անձրուկը (խամսին)՝ տղքատները փրկարարը։ Մինչև քաղյուղի (նավթ) մուտք գործելը, լուսավորության զլխավոր ազդյուրը գլփին ձկան յուղն էր։

Նահանգի ընդերքը հարուստ էր նաե հանքային պաշարներով, սակայն դրանց մի շնչին մասն էր միայն մշակվում։ Կային մարգանցի, արծաթախառն կապարի, պղնձի շահագործվող մի քանի հանքեր, որոնք ամբողջությամբ օտար կապիալի ձեռքում էին գտնվում։

1908—1909 թթ. արապիդոնցի Մարմարյանները ձեռնամուկի եղան Մինկիլա և Կյուշանա հայկական գյուղերում արծաթախառն հանածոների օգաագործմանը, որի շնորհիվ շատ ու քիչ բարենորոգվեցին շրջանի գրասասային ճանապարհները։ 1914 թ. սկսված աշխարհամարաի հետեանքով գազարեց այդ հանքերի օգտագործումը ես։ Գյու-

մուշխաննի (բառացի՝ «արծաթատուն») արծաթահանքերը, որոնք օգտագործվում էին գեոևս հնագույն ժամանակներից, թուրք աշխարհակալների օրոք ըուրորվին լքվել էին։

Բուժիչ հաակություններ ունեցող ըաղմաթիվ քերմուկներից, որոնցից շատերը հին դարերից հայտնի էին ընանչուխանը. պաշտոնապես շահագործվում էր միայն Տրապիդոնից 5 կմ հարավարեմուտքում գտնվող Կերասիա գյուղի քերմուկը։ Կային քերմուկներ, որոնց ակնառու բուժիչ հաակությունները ընդունելով որպես աստվածային «հրաշք», անհիշելի ժամանակներից դարձել էին սիսաավայրեր։ Այգպիսիներից էին Տրապիդոնից էրդրում տանող խճուղու եղրին ցայաող «եռշօղլանի» և Յոմուրայի գավառակի Շանա գյուղի Այաղմա կոչված հանքային ջրերը։ Բուժիչ հաակություններով հայտնի էին նաե Օրգուի, Թերմեի, Ֆաթսայի մոսակա քերմուկները։ Շրջակա բնակիչները, քաջ ծանոթ լինելով այդ քերմուկների բուժիչ հատկություններին, առանձնապես մաշկալին, սաամոքսային ու հոգային (համշենցիների արտահայտությամբ՝ չուր ցավի, չոր ցավի) ցավերի գեմ օգաագործվող ջրերին, դրանց ակունքների մոա փոսեր էին փորում, ջրից խմում, լվացվում, լոգանք ընգունում և այլն։ Սնուամենայնիվ, ոչ մի միջոցառում այգպես չէ չձեռնարկվեց այդ ջրի շահագործման ուղղությամբ, ըացի այն, որ գրա կտրիքն ղգացոգները ոչ թե աաըին մեկ անգամ, այլ ըստ անհրաժեշտություն օգաադործում էին աարվա հնարավոր ըուրը եղանակներին։

Ռուսական բանակի կողմից Տրապիդոնը գրավվելուց հեաո՝ 1916 թ. եղեոնից փրկված Հոմհանենս Ղուկասյանը, իը ընկերոջ հեա, իրավունք սաացավ Այաղմայի ջուրը ջահագործել։ Արգեն սկսել էին այդ ջրի վաճառքը։ Ռուսակտն բանակի նահանջի հետ հեոացան նաե այդ գործի ձեռնարկողները։

Նահանգի ամենամեծ ու նավարկելի գետերը Գըղըլ-իրմաքն (Ալիս) ու Եշիլ-իրմաքն (Իրիս) են։ Գըղըլ-իրմաքը Սև ծով թափվող ղետերից ամենաջրառատն ու երկարն է (1151 կմ)։ Սկիզբ է առնում Փոքը Հայքի բարձրավանգակից և ծով թափվում Սամսոնի արեմուտքում՝ Պաֆրա քաղաքի մոտ։ Եշիլ-իրմաքի երկարությունը 416 կմ է, ծով է թափվում Չարշամպայի մոա։ Ամասիայի արեելքում Եշիլ-իրմաքին միանում է Գալլ դեաը (Քեւլթիթ-տերեսի, նախկինում՝ Լյուկոս, աղա՝ Կերմելու)։ Այս գետերի ջրերը լայնորեն օղաագործվում էին բրնձի շրջակա լայնաաարած ցանքաաարածությունների ոռողման համար։ Մյուս մեծ կամ փոքը գետերը նահանղի ներքին ջրերն են և սնվում են Պոնտոկտն երկար ու ձիւլ լեոնա-

յուրի թարձր դազաթներին ամիսներով կուտակելուդ ձյան շերտերից ու մթնոլորտային տեղումներից։ Այս պատճառով ներքին դետերի մեծ մասըն ամռանը սակավաջուր է դառնում, մասամբ նաև՝ լողորովին շորանում։ Ներքին ջրերով հարուստ է նահանդի միջին, հաակապես արևելյան մասը։ Եջիլ-իրմաքից դեպի արևելք, հաջորդաբար, Սև ծովն են թափվում մեծ ու փոքր հետևյալ դետերը՝ Զաթուդը, Ճևիզ-տերեն, Տուլամոնը, Մեւլթը, Տոռնասուն, Կիրասոնը, Գասապ-սուն, Զիֆ-րեն, Կալբան, Խուրշուդը, էլաշուն, Ֆուը, Կալամինան, Տեղերմեն-տերեն, Յամպուլին, Գարա-աե-րեն (Սև-դևա), Խամուրկյանը, Մահոնան, Կադաբաթուման, Ռիդեն, Մափսավրին, Աթինան, Ֆուրթունան ե շատ այլ դետեր ու դեաակներ իրենց վտակներով։ Նահանգն արևելքից ամփոփվում է Լըկտյու ու ջրառատ Ճորոխ (հնում՝ Վոհ, Ակամ-սխ) դետով (Լըկարովթյունը՝ 345 կմ)։ Գրեթե բոլոր դետերը, մանավանդ միջին ու վերին հոսանքներում, բավականին արադահոս են, տեղ-տեղ սլանում են նեղ կիրճերով, ցած թուփվում մեծ ու փոքր քաղնեից (սպառաժ), դույացնելով դեղատեսիլ ջրվեժներ։ Զմայլելի աեոաբան է ներկայացնում Մալա գյուղի մոտ (Տրապիդոնից հարավ-արեմուաք) Խուրշան-Կապա-

1. ՀԱՄԵՆԻ ԵՐՁԱՆ

Համշենի հինավուրց իշխանությունը գտնվում էր՝ Թուրքիայի՝ նախկին Տրապիզոնի նահանդի Լադիստան դավառի (այժմ՝ Ռիդեի նահանգ) հարավ-արևմուտքում, Բաթումի ու Տրապիզոնի միջև, Ռիդե և Աթինա ծովափնյա քաղաքների հարավ-արևելքում, Պարիսարյան (Պոնտական) լեռնաշղթայի երկնաքեր դադաթի՝ Քաջքարի (3937 մ)¹ ստորոտում։ XIX դ. վերջից մինչև 1920-ական թվականները իր հիմնական տարածքով վարչականորեն կոչվում էր Համշենի դավառակ։ Մովեդեբքից ուղիղ դժով մինչև լեռների ջրաբաշխ դադաթը շուրջ 100 կմ է։ Քաջքարը, ինչպես նշվեց վերը, կոչվում է նաև Վարշամ, Վարսամ (թուրք․՝ Կաշկտը)։ Ըստ անդական ավանդության, «Վարշամ» անունը կապված է ս. Վարդանանց նշխարի հետ․ որ իրը Ավարայրի ճակատամարտի վերջին զրվադը անդի է ունեցել այս դժվարամաաչելի ձորերում, և հայ նախարարներից շատերը այստեղ են ապաստանել ու Տայոց Որջնհաղ դյուղի մոտ։ րաղմիցս ճակատամարտել հակառակորդի գեմ։ Այս Որջնհաղ դյուղը գոյություն ուներ նաև մեր

նից՝ 150 մետր բարձրությունից․ արժաթավարս կոհակներով թափվող համանուն ջրվեժը։

Հանրահայտ է դետերի նշանակությունը րնակչության տնտեսական կյանքում։ Նահանդի ոչ մի գյուղում հողմադաց չի եղել։ Հացահատիկ աղալու միակ միշոցը դետերի վրա կառուցված ջրադացներն էին։ Ջրի ուժով էին աշխատում նաև ջրկապալները (կանեփաթակ)։ Անգնահատելի է դետերի դերը նաև այս երկրամասի անասնապահության դարդասցման ասպարեղում։

Տեղերմեն-տերե դեաը, հին դարերից օդաագործվելով անտառանյութ, այդ թվում նաե մեծ րանակությամբ թանկարժեք տոսախ փոխադրելու համար, հույներից ստացել էր Բիքսիտիս (Տոսախ) անունը։

Մինչև XX դ. առաջին-երկրորդ աստնամյակները նահանգը ղուրկ էր երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտից։ Մարդկանց և բեռների փոխազրույնը գերադանցապես կաաարվում էր գրաստով (էշ, ձի, ուղտ)։ Հեռավոր վայրեր՝ Պարսկաստան, Վան, Սերաստիա, փոխադրումները կաաարվում էին հիմնականում ուղտերի, մոտակա շրջանները՝ ձիերի, ջորիների կարավաններով։ Զիաքարշ սալերով փոխադքում էին դիաավորապես պետական փոստն ու դանձերը։ Այդպիսի սալերին լծում էին 3—4 դուլդ սընթաց ձի։

օրերում (1913—1915 թթ.), Ճորոխի աջ ափին և կարևոր հանգրվան էր այդ երկրով անցնող ուղեվորների համար։

Թուրքերի կողմից Պոնտոսը նվաճելուց հետո (1461 թ․) Համշենը, որպես դավառակ, մտնում է Լադիստան դավառի մեջ։ Համշենի սահմաններն էին՝ արևելքից աջաբացիների երկիրը (որոնց փոքրը մասն այժմ ապրում է Թուրքիայի սահմաններում, Ճորոխից արևմուտք, իսկ մեծամասնությունը րնտկվում է Աջարական ԻՍՍՀ-ում)։ Հյուսիսային ծովադրյա մասը լադերի երկիրն էր, որոնք տարածվում էին Ռիդեից մինչև Խոփա։ Հյուսիս-արևմուտքում գտնվում էր հունարնակ Օֆ դավառակը (որն առաջիններից էր բոնի մահմեդականություն ընդունողների թվում)։ Հարավարևմըայան լեռնային կածաններով Համշենի դավառը կապված էր Սև-դետին (Սյուրմենն դավառակ)։ Հարավից Պարիսարյան լայնանիստ լեռներով անջատված էր Տայոց աշխարհի հարավային գավառներից (Արոաաց-փոր)։ Քաջքար աժդահան անմաաչելի պատնեշ է հանդիսացել Համշեն երկիրն ասպաաակող վայրադ հակառակորդների դեմ։

^[1] Տե՛ս «Ժամանակակից Թուրքիան»։